ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «06» 09 2019թ № 1081-Լ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ (ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՄՅԱՆՑ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 461-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 40-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 9-րդ ենթակետը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Սահմանել էկոնոմիկայի նախարարի տեղակալների կողմից համակարգվող գործունեության ոլորտները (բնագավառները)՝ համաձայն հավելվածի:

2. Էկոնոմիկայի նախարարի տեղակալների միմյանց փոխարինումը կազմակերպել հետևյալ կերպ՝

1) Ավագ Ավանեսյան	Վարոս Սիմոնյան
2) Արտակ Քամալյան	Տիգրան Գաբրիելյան
3) Արման Հովնանյան	Նաիրա Մարգարյան

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալների միջև

լիազորությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի մարտի 26-ի N 210-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 461-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի, նախարարի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի միջև աշխատանքների բաշխման և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 266-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 40-Ա հրամանները:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի
սեպտեմբերի 6-ի
N 1081-Ա հրամանի

Էկոնոմիկայի նախարարի տեղակալների կողմից համակարգվող գործունեության ոլորտների (բնագավառների)

1. **Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արտակ Քամալյանը համակարգում է՝**

գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականության, այդ թվում՝ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման, գյուղատնտեսական խորհրդատվության, ազգային թվային գյուղատնտեսության հարթակների ստեղծման, գյուղական համայնքների կայուն զարգացման, գյուղատնտեսության ապահովագրության, օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների ու կազմակերպությունների հետ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության բնագավառները՝ նախարարության գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման; գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի ու գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչությունների, Հայաստանի խաղողագործության հիմնադրամի, «Երկրագործության գիտական կենտրոն» և «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ների, «Գյուղատնտեսության տարածքային զարգացման ՏԻԳ պետական հինարկ» ԳՖԿ-ի միջոցով:

2. **Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը համակարգում է՝**

բուսաբուծության, անասնաբուծության, ագրովերամշակման, պարենային անվտանգության և ապահովության, սննդամթերքի անվտանգության, օրգանական գյուղատնտեսության, հավաստագրված սերմեր արտադրողների, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառները՝ նախարարության գյուղատնտեսության առաջնային արտադրանքի; սննդամթերքի անվտանգության, պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչությունների և «Ագրոքիմիական ծառայություն», «Սերմերի գործակալություն», «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

3. **Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը համակարգում է՝**

մակրոտնտեսական վերլուծությունների և հետազոտությունների, արդյունաբերության զարգացման, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման, ինչպես նաև ընկերություններին պետական աջակցության քաղաքականության, պետական և մասնավոր հատվածի համագործակցության երկխոսության ոլորտային հարթակների ձևավորման, արտահանման զարգացման քաղաքականության հանրային ներդրումների կառավարման, «պետություն-մասնավոր հատված» համագործակցության բնագավառները՝ նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի; հանրային ներդրումների քաղաքականության և արդյունաբերության զարգացման վարչությունների և «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

4. **էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վարոս Սիմոնյանը համակարգում է՝**

Եվրասիական տնտեսական միության, Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միության «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրին առնչվող մասով դրույթների և ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության, ԵՄ Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» (GSP+), ԵՄ կողմից տրամադրվող աջակցության ծրագրերի և Եվրոպական հարևանության գործիքների ներքո իրականացվող ծրագրերի իրականացման և դիտանցման, ԵՄ Արևելյան Գործընկերության շրջանակներում ծրագրերի և նախաձեռնությունների, «Տնտեսական զարգացման և շուկայի հնարավորություններ» պլատֆորմի և դրա ներքո պանելների, Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ համագործակցության, ԱՀԿ համաձայնագրերի պահանջների և ԱՀԿ շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների ապահովման, Անկախ պետությունների համագործակցության, ինչպես նաև ՄԱԿ-ի առևտրային և տնտեսական կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ ոլորտային համագործակցության, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ միջազգային տնտեսական կապերի հաստատման, արտաքին շուկաների հասանելիության բարձրացման, միջազգային տնտեսական համագործակցության համար համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծման և զարգացման, որակի ենթակառուցվածքների՝ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման բնագավառները՝ նախարարության Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի; Եվրամիության հետ տնտեսական համագործակցության; արտաքին կապերի; որակի ենթակառուցվածքների զարգացման վարչությունների միջոցով:

5. **էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Հովնանյանը համակարգում է՝**

ներդրումային քաղաքականության և ներդրումների և ներդրողների պաշտպանության, ներդրողների հետներդրումային սպասարկման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության, երաշխիքների տրամադրման, արժեթղթերի թողարկման ու վարկերի ապահովագրության, ֆինանսական վնասների ապահովագրության, համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման բնագավառները՝ նախարարության գործարար և ներդրումային միջավայրի բարելավման; ներդրողների և արտահանողների աջակցության վարչությունների, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

6. **էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նաիրա Մարգարյանը համակարգում է՝**

ՀՀ օրենսդրությամբ նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, ձեռնարկատիրության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման, ստեղծարար արդյունաբերության (այդ թվում՝ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի մշակման և կիրառման) փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական աջակցության, ձեռներեցության զարգացման, լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման բնագավառները՝ նախարարության ձեռներեցության զարգացման և մտավոր սեփականության գործակալություն վարչությունների, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և լիցենզավորման և թույլտվությունների գործակալություն վարչության միջոցով: